ԲԺՇԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
№ ՀԱՊԱԿ-ՄԱԾՁԲ-21/42

ք. Երևան «26» մայիսի 2021թ.

Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն ՓԲԸ, ի դեմս տնօրեն Սերգեյ Խաչատրյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և ՀՀ ԱՆ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը մյուս կողմից, ի դեմս տնօրեն Վարդան Ավագյանի, ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է բժշկական զննության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ, ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 650.000 (վեց հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

2.2 Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.3 Բժշկական զննության ծառայության մատուցման համար ժամկետը սահմանվում է 26.05.2021 թվականից մինչև 25.12.2021 թվականը:

2.4 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում

2.5 Ծառայության մատուցման վճարումը կատարվում է փաստացի մատուցված ծառայության դիմաց՝ ըստ բուժզննում անցած աշխատողների թվաքանակի:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Բժշկական զննությունն իրականացնել անձամբ, պատշաճ որակով սահմանված ժամկետներում:

3.2 Կատարողը բժշկական զննության ծառայության աշխատանքները կատարելու է իր սարքերով և միջոցներով:

3.3 Պատվիրատուն պարտավոր է իրեն մատուցված ծառայությունների համար վճարել պայամանգրի գինը՝ պայամանագրի 2.3 կետում նշված ժամկետում և կարգով:

3.4 Կատարողն իրավունք ունի հրաժարվել պայամանագիրը կատարելուց՝ Պատվիրատուի վնասները լր. վ հատուցելու պայմանով:

3.5 Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել պայամանագրի կատարումից կատարողի փաստացի կատարած ծախսերը հատուցելու պայմանով:

4. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

4.2 Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 2):

4"3 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

5 ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6 ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

6.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

6.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

6.3 ***Պատվիրատուն համաձայնվում է, որ Կատարողը, համաձայն Հայաստանի Հանրապետության «Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքի 4-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 31-ի N13-Ն հրամանի 42-րդ կետի դրույթների՝ օրենսդրությամբ սահմանված կարգով հաղորդում ներկայացնի համապատասխան մարմիններ և պարտավորվում է տրամադրել այդ հաղորդման ներկայացման համար անհրաժեշտ ողջ տեղեկատվությունը:***

6.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

6.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

6.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

6.7 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

6.8 Պայմանագիրը կազմված է 5 (հինգ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

6.9 Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿԱՏԱՐՈՂ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՆ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ	«Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ
ք.Աբովյան, Արզնու խճ. 10	Հասցե՝ Նուբարաշեն 1/3
ՀՎՀՀ 01243384	ՀՎՀՀ՝ 00475611
Կենտրոնական գանձապետարան	Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ՓԲԸ Էրեբունի մասնաճյուղ
ՀՀ 900018005190	Հ/Հ 163068068481
Տնօրեն Վ.Ավագյան	Տնօրեն Ս.Խաչատրյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված №1
«26» «մայիսի» 2021թ. կնքված
№ ՀԱՊԱԿ-ՄԱԾՁԲ-21/42 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ						
Հ/Հ	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը	քանակ	գումար
1	Բժշկական զննության ծառայություններ	բժշկական զննության ծառայությունը իր մեջ ներառում է պալարախտի հայտաբերում շարժական ֆլյուորոգրաֆիայի միջոցով	անձ	2.000	325	650.000

ԿԱՏԱՐՈՂ

ՀՀ ԱՆ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ
ք.Աբովյան, Արզնու խճ. 10
ՀՎՀՀ 01243384
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900018005190

Տնօրեն
Վ.Ավագյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ
Հասցե՝ Նուբարաշեն 1/3
ՀՎՀՀ՝ 00475611
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ՓԲԸ Երեբունի մասնաճյուղ
Հ/Հ 1630680068481

Տնօրեն
Ս. Խաչատրյան

(ստորագրություն)
Կ.Տ.